

ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ


ՆԱԽԱ ԿԱՐ ՈՐ ԵՆ Է ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՍՍ լրագրի
ԳԱՇԻԿԷ (Հասցեագրվել)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՐԱՅԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ՝ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՆՈՒՑՈՒՄ ԶԱՄԱՐ
Տարեկան, ողջ դանկն. 60
Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՐԱՆԵՐ
Տարեկան Ձրանք 20
Վեցամսեայ » 12

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԻԿ ԵՒ
ԵՆՈՒՑՈՒՄ ԶԱՄԱՐ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան և հրատարակման գրասենյակը Երևանի Կենտրոնական փողոցի 11-րդ տնի մեջ է:

ՈՐԲԵՐԸ

Քաղաքակրթութեան ընծայած բիւրաւոր բարիքներուն և բազմազան առաւելութիւններուն չէ՞ միայն, որ մեզի չեն մասնակցիր անորոք այլ առ յաւելտ զրկուած են ու պիտի մնան նաեւ իրենց հօրենական փայտաշանքներէն և մայրենի գորովէն ու գործունէրանքէն:

Ապագայն մտայլ է անոնց համար այնքան, որքան ներկայն թշուառ է:

Մեր աչքերէն հեռու, մեր արտերէն հեռու, հայրենի քար ու քանդ ծնային մէկ անկիւնը կծկտած, կամ մխրակալտուրու անապատի եւ փրատակներու վերածուած անհամար շէն տուներու և պալատանման շէնքերու աւերակներուն բոլորաբը թախաւայած, տանեակ հազարներով փորկիկներու — անմեղ գաւառիկներու — վրայ, գուժի և կարեկցութեան հայեացքներ հըրաւիրելու համար կ'ուզենք զբաղել այս անգամ:

Մենք, եգիպտական հայերս, Սբինքսի բազմադարեան անտարբերութիւնը իւրացուցած, կուզենք խցել մեր ականջները, մեր փոքրիկներուն աղիտորմ ճիւղերը չի լսելու, դարձեալ փակել կը ջանանք մեր աչքերը, անոնց վիշչն ու տառապանք չի տեսնելու համար: Մինչդեռ անոնք էին, որ արտասաւթուրմ աչքերով և սարսափահար դիտեցին իրենց ծնողքին, քրօքր, եղբորը և ազգականներուն սրախողտող տապալումն, ինչպէս նաև անողոք ու փայտեանասիրտ սպանիչներու սուրին ու ետքադանի հարուածներուն տակ արիւնաթաթաւ գալարումներն: Անոնք էին, այս բուն իսկ իրենց ականջներով լսեցին սիրելիներու մտահամերձի հառաչն և իրենց շուրջ տիրող վայնասուններն ու խառնաշփոթութիւններ: Իրենց թշուառ վիճակին ու կացութեան անգիտակ, անպատասխար ու անօգ, բուն իսկ իրենց կեանքին դէմ թակարդ լարող արիւնկզակ թշնամեաց գուռները բնականաբար մտորային առօրեայ չորաբեկ հացը, որուն խմորը իրենց սիրելիներուն արիւնով և իրենց հեղեղամանն արցաբնբով էր շագուած: Կորսուին ամէն ինչ, որ իրենց արդար սեփականութիւնն էր և իրենց անմեղ ճակատին վրայ զրօշմուեցաւ մարդկութեան բերանով սրբի և ընտանեկուրկի աննազ ախունը, ու մենք դեռ կ'ուզենք հաստալ

թէ՛ ժամանակի հոսանքը իւր թելոց վրայ հետզհետէ կ'առնէ կը տանի անհունին գողը, այս աղեկէջ դիպաց թաղմութիւններն ու սարսաղաղեցիկ տպաւորութիւններն և մեր արդէն անտարբեր օրտերու և զգացմանց վրայ կը քաշէ մտապումի վարագոյրը: Վերյուշում մը, և պիտի պատկերանայ մեր երեւակացութեան և աչաց հանդէպ, այն ամայի անկիւններուն մէջ մտապման դատապարտուած մեր որբերն, որոնք իրենց գողգոշուն բազուկները կը կարկառեն և աղերսական նայուածքներ իրենց շուրջը կը պտտուեն, կարծես ինչու համար «գլխացէ՛ք մեզի, փրկեցէ՛ք մեզ»:

Ժամանակը անցած չէ տակաւին, ուշ գնելու համար այն անմեղութեան ձայներուն և մենք մեղէն հարցնելու թէ, մինչև ցարդ ի՞նչ բընք և դեռ ի՞նչ կարոյ կնք ընել այն հազարներով լքեաներուն, որոց աղբուի ձայնը մեր անտարբերութեան դէմ, Հաբելի արեան բողբոջն շատ անգամներ աւելի ազդու պիտի լինի Արդարութեան դահին առջեւ . . . :

Իրաւ է, փարաւոններու տախարակ երկրին ազատութիւնը և հանգստութիւնը վայելելու արժանացած հայերս, դահի՞ններու արիւնաշաղխ սուրը դեռ իրենց պատենին մէջ չ'հանդչած, նախճիրներու թարմութեան տա՛ն, լրագրութեանց գուռում գոչումէն սթափած, բան մը բան մըն ալ ընելու ջանքին . . . :

Ժողովներ գումարուեցան, ժողովականներ ընտրուեցան, նիստերը իրարու յաշորեցին. Հայաստանի որբերու ինքնամատար յանձնաժողով անունը տրուեցաւ եղած կազմակերպութեան, Գեղեցիկ սեռին ալ աշակցութիւնը գործին նոր մղում մը համարելով, Տիկնակց Օժանդակ Մասնախումբ մը կազմուիլ որոշուեցաւ. ամէն կողմ տենց ստ գործունէութիւն մը կը տիրէր, մարդախոշոշ ձեռքերու գործած աւերին հետքերը գարմանելու խանդով տողորուած: Բարին յաղթանակած էր. այդպիսի ոգևորմալ ձեռներեցութեան մը առջև պիտի ջանալիքներէն այն շղթաներ, որովք հզօրը կը կաշկանդէ տկարին . . . :

Վերածննդով դարն էր: Բացառեցաւ ստորագրութեանց տետրը 23 սնկուններու սրբաւնակութեամբ նիհար թուայն վրայ, տարեկան 5880 զրուչի ցուցակ մը հրատարակուեցաւ կամ անուններ

հրատարակուեցան . . . մինչև որ աշխոյժը իւր խանձարտորին մէջ մարեցաւ և գործունէութեան այդ մխրակալտուց կայծը անհունին մէջ անհետացաւ, թախաճի խորշակէն խամրած շուշանի շորչած քեղեկներուն նման: Ի՞նչ շահեցան մեր ոչբերը այս ամէն վալըլուկներէն: Պատճառը արդիւնքէն անհայտ մեծատ մեծ էր: Սակաւ ինչ եւս և անայ յուսախաբ բլլալին զգացին ամէն անգամ, որոնք իրենց աչքերը խոշոր բացած նեղաբի արգասաբեր հովիտներէն կ'սպասէին առատածեղեկութեան գեղեցիկ օրինակ մը ուրիշ հայ գաղթականութեանց ներկայելու համար:

Արդիւնքը շատ ժխտական էր. խորանկ թմրութիւնը տիրած էր: Տևալիս հայ թերթը Փարոս իր լապտերը ձեռք առաւ և պատյոս կը եւս կատարէ թմրածներու աշխարհին մէջ. իւր լապտերին լոյսը ցուցաբերէ քնարեկ աչքերու մէջ արթնցան (վե՛ր ըրտին քնանալու համար անշուշտ) ըմբռունցիկ իրենց կոչման և պատասխանատուութեան ծանրութիւնը կայտառայ մի օր դարձեալ անոր էջերուն մէջ կարգադիրը Որբախնամ Յանձնաժողովոյ՝ Երկու պատուական անգամոց որբախնամ հրաւերը, Գահիրէի և շրջակայից ազնիւ հայրենակցաց ուղղեալ, որպէս Վիլամէն Թ. փոքր կուրտիութեան չափիչ շանդակակոթման տուն մարին մէջ նպաստ մը ստորագրելով, անց գործադրի փոխարէն վճարելու բարեհաճ յանձնաժողովոյ գաւառագետին . . . : Վերջ ջանքատի նմանութիւնն ունէր այս ձեռք յանձնաժողովոյ գործունէութեան համար, և արդարեւ աչքօր մէջ տարեւտեալ բոլոր գլխովին ապարդիւնու ճարտարաց իրաւունք Մանուսէրայ կողմէ այնուհետեւ Երբայ տակաւնութիւն և աննշան բարեգործութիւններու արձանագրութիւնը բնիկը թէ և զն աչքին առջեւ, — ինչպէս կիպրոսի միջոցով մէջ կորէ պրոնած նաներ, նուէրներ չուն ջակներ կ'էն. — բայց այժմայի իւր ակամ պետք է նկատենք կգկատահայ ցուկացքութեան և համբաւին ճեւ բայդատակով. երբ Հայաստանի մէջ հազարաւոր անբժութեան գրաւիչ պատկերներէն — որբերէն — չորս հինգ հատին որդեգրուած և մեր փոքր քանակ նուէրները միայն կը յիւստատարեն Դեռ ո՛րչափ անհաշուելի թմրուիչ փնայանք արտասուաց հովտին մէջ մեր զթութեան և կարեկցութեան կարօտ: Մեր աւելորդ

ծախքերէն փոքրիկ բաժին մը և ահաւա-
սիկ շատերուն գոնէ, արտասուքի կաթիլ-
ները զաղբընցնելու կարող կը լինինք:

Մեր անգրանիկ թուով երկու որբա-
խնամ ընկերութեանց գոյութիւնը աւետե-
ցինք, գոնէ ուժ տանք այդ երկու կազ-
մակերպութեանց, յատկացնելով անոնց նա-
խորդ տարւոյ հրատարակուած ցուցակի
(եթէ ստորագրողները մուցած են, մենք
կը յիշեցնենք իրենց) պարունակութիւնը և
նոր նուիրատուութեանց համար ցուցակ մը
բանանք և վերջապէս խնամենք որբերը
ապա թէ ոչ ընդհանուր թշուառութեան
անդունդէն այդ անմեղ հոգիներու անէծ-
քները պիտի լսենք աշխարհի և մարդկու-
թեան ճակտին ուղղուած: Մարտու մը պէտք
է անցնի մեր երակներու մէջէն, երբ յի-
շենք մեր թշուառ ՈՐԲԵՐԸ:

Ե.

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՂԵՔԱՆԻՐԻԱ, 7 Օգոստ.

Բարեկամ, Արշալոյսի անգրանիկ երկու թի-
ւերն ստացայ այս առաւօտ. չնորհակալ եմ. կը
խնդակցիմ, եւ այս տեղի շատ երիտասարդներու
կողմէ Արշալոյսի գտած ընդունելութիւնն ու
ձեզ հաղորդել անպարտելի կը կարծեմ թէ զիս
փութկոտ մը կոչել տալու գաղափարը չեմ ներ-
չընչած լինիր Փիւնիկէն վերջ Արշալոյսի երևուած
այստեղ իմ եւ շատ մը բարեկամաց նախանձը
չարժեղու պէս բան մ'ըրաւ. ինչու մենք ալ այս
տեղ չունենայինք գոնէ մէկ թերթ, ձեր կէտը չէ՞
որ մենք ալ հոս մարդիկ ենք եւ թուով եթէ
ձեզնէ առաւել չենք նուազ ալ չենք. հիմա կ'ըզ-
գամ թէ մենք Աղեքսանդրիացիքս զոնք ենք եւ
առանց Գահիրէցոցը նշանակիչ թուանշաններու
գորութիւն չունինք առանձինն: Մենք հոս ճան-
ճուտ անշարժութեան մատուած հոտած ջուրի կը
նմանինք, մինչդեռ ամենազոտութիւն գործերու մէջ
իսկ նախաձեռնարկներ ըլլալու յանդգնութիւնը
կարծես միշտ ձեզ վերապահուած ըլլայ: Տարինե-
րէ ի վեր դիտած է որ ամենալաւ ձեռնարկ-
ներ այդտեղ միայն կը սաղմուտորուին եւ կը կեր-
պարտանանք: Ընդհակառակը այստեղ ալ սաղմ-
նացածները կը կազմալուծուին, կը վիժեն: Այս
երկու փարաւոնեան քաղաքներու մէջ յայտնութիւնը
որչա՞ք կը տարբերի իրարմէ, կարծեսթէ նոյն ազ-
գի զաւակները չըլլանք: Նախանձելով կ'ըսեմ թէ
զուք այդ տեղ ամեն բան ունիք, գուցէ քիչ մը
անկերպարան վիճակի մէջ, ինչ որ ալ ըլլայ վեր-
ջապէս Գահիրէի մէջ, մա՞նաւանդ վերջերս ար-
տաքոյ կարգի չարժուած մը կ'երեւայ որ նշանակիչ
հանգամանքներ ունի, մեռելը կը կենդանանայ ը-
սել կուզեմ, քանի որ ունիք թերթեր, ընթերցա-
րան, թատրոն, նոր կազմակերպելի լսարան, հա-
մախոհութեան վայրեր, տպարաններ, ընկերու-
թիւններ՝ բարեգործական, որբախնամ, շահասի-
րական, հայկական սրճարան, ուր եթէ կ'առար-
կուի թէ առաւօտները ունիք բամբասանի շա-
մեմանքով քաղցրացած սուրճ, կէս օրին բախտա-
խաղով եւ պէզիկով շագիացած գլուխներ և առկի-
լի ոլորուն ծուխով եւ արբշիռ աչքերով խոս-
մաւրի կանաչ սեղանները չըլլանակամ մարդիկ
սակայն իրիկուններն ալ ունիք դաս մը երիտա-
սարդներ, որոնք օրուայ վաստակեալ կեանքէն
վերջ կը համախմբուին ու խօսուրուտութիւն ձեռով
մը կը վիճարանին շահեկան նիւթերու վրայ տա-
լով անոնց գրական, գիտական, քննադատական,
ազգային եւ քաղաքական գոյներ. այդ շփումնե-
րէն է ահա որ յառաջդիմութեան կայծերը կը
թուին. իսկ մենք ինչ ունինք հոս, ոչինչ. ամենքը
ձեռքերին ծալած Մեսիային կ'սպասեն, որ չպի-
տի գայ, ու փակուած են տան անկիւնը կամ ով
գիտէ ուր . . . Գուցէ այստեղ երեւոյց սուտ
համաճարակի վախը զիրենք նետած ըլլայ այդ
անկիւնները. բայց եկուր տես որ այդ պէս Պի-

նարիկներու եւ . . . ներու մէջ յո՞ճ սի կ'ի-
րուին անոնք եւ եթէ նետերնին իօսիս, բարե-
կամ, կ'ըսեն քիչ քաղցրիկ շնչոտով մը եւ թափ-
թրփած կոտորուքով մը, համաճարակ կայ, ֆոն-
եակը սիկրօքները կը սասկեցնէ եղեր, քօնեակ
մը կ'առնէ՞ք. ու կ'անպիտանան թէ իրենք են
համազգային սեւ ցաւին սիկրօքները. ահա մեր
այստեղի երիտասարդութեան մեծագոյն մասին
առօրեայ կեանքի խոշոր գծերը, անխտիր ամեն
բանի համար իրենց չէզոքութիւնն ալ քօնեակի
սալաքան ու մեզնէն է:

Մենք հոս ո՞չ թերթ ունինք, ո՞չ ժողով, ու
ատենք ունենալ մեզ համար Մուրակի մէջ ճամ-
բորդել ըսել է: Ընթերցողներ ալ շատ չունինք
արգէն. եթէ քանի մը թերթեր ալ կը կարգա-
ուին այն ալ ձրի ըլլալուն պատճառաւ է: Բարե-
կամ, ի՞նչպէս կ'ըլլայ եթէ զուք ալ ձեր Արշա-
լոյսը սանկ ձրի տեսակէն մեր Աղեքսանդրիացի-
ներուն հրամանէք: Կը լսեմ թէ հոս վահրամ վար-
դապետը ամեն բանի այդ տեսակէն կ'ախորժի ե-
զուր. հարկաւ ստացաք իր ըրած Արշալոյսի refusé-
նէ՞, տաճկական անճան առածը միտքս կուգայ
հոս. «իմամ և հեմապ » մի
զարմանաք սակայն, անոնք վարդապետ են, ատանկ
բաներ ընելով է որ Պանգալին համար զբամ կ'ա-
ւելցնեն ու փորձերնին կը հաստացնեն. չէ՞ որ՞ Ը-
սինք թէ անոնք ամեն բանի ձրի տեսակէն կ'ա-
խորժին, ձրի ուտել, խմել, ձրի հագուել, կապ-
ուել, ամառական փորձերնին տկոնցնել ու յղի-
ցնել ու նոյն իսկ ձրի տեսակէն եպիսկոպոս ըլ-
լալ ու երբէ՞ք ձրի քարոզ խօսել, ձրի թա-
ղում, պատարագ, կնուէք. հարմար ընել, ատեն
կ'երեւի թէ ուխտած են ձրի տեսակէն բայլ մ'ան-
գամ չընել: Իսկ ամբողջ օրը արդեօք ի՞նչ կ'ընեն
մեր այս յոյլ, թոյլ, ծոյլ Աստուծոյ մարդիկը. —
ի՞նչ պիտի ընեն Պանգալ զեանքը զարկած ամբողջ
օրը պոյսան պոյս կը քննան վասն ամենամեծ
փառացի Աստուծոյ:

ՊԱՊԻԿ-ՃԳՆԱԻՈՐ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հրապարակի վրայ այս պահուս կը շրջի
բազմաստիպար հանրագրութիւն մը ուղ-
ղուած առ փոխ-տեղապահն Եգիպտոսի ա-
ռաջնորդութեան, որով կը զեկուցուի նմա
մեր դաղթական հասարակութեան փափաքն
որ է, չիշատակել ալ Օրմանեան Պատրի-
արքն եկեղեցւոյ մէջ, իր այն արարքնե-
րուն համար որոնք մանրամասնօրէն խմբազ-
րուած են նոյն հանրագրութեան մէջ:

Վարդապետի երկուշաբթի օրն, որ ըստ
սովորութեան Մարմինայի գերեզմանատան
մէջ պաշտօն և պատարագ կը մատուցուի
մեռելոց հոգւոյն համար, եկեղեցական
դասը խմբովին այս անգամ շքեղ դամբա-
րաններէն անցնելով, զնաց յովապատէն
անդին և մասնաւոր հոգածութեամբ հո-
ղեհանգստի աղօթքնիրը կարդաց այգա-
տաց բաժնին մէջ:

Գերեզմանատան վերի մասին մէջ նոյ-
նը կատարուեցաւ նաև ողբայի Մտչիկ
Գարբիէլեանի, Կունծիկ Պարեղայի և Նշան
պատուելիի Գերեզմաններուն վրայ և ներ-
կայք սրտայոյզ ձայնակցեցան և կեղեցական
դասուն աղօթիցը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ օր Աղեքսանդրիոյ մէջ այգա-
տաց մը ձեռքը տուրակ մը առած կը ուղ-
արուէր իր հայրենակիցներէն ուղղումովին

խնդրելու համար. Արաքնեք բազմութեամբ
խեղճ մարդուն վրայ յարձակեցան, իբր թէ
ձեռքի տուրակէն հծծիւններ (gémisse-
ment) լսուել են: Այգապար մտաւայ պա-
հականցը տարին գէշ վիճակի մէջ:

Վերջապէս տեղացիները դարձեալ
ուրիշ հայտ մը վրայ յարձակելով վիրա-
ւորելին և պահականոց տարին: Որովհետեւ
հաւաքուած բազմութիւնը շատ աղմուկ կ'ը-
նէր, զնգապետ Հարրինկըն պէյը ցրուե-
լու և խաղաղեցնելու համար խուժանք,
տուշ մը առնել տուաւ հրդեհի ջրհաննե-
րով, և այսպէս զովանալու համար ծովու
բազինք առնելու յոգնութիւնէն ազատեց
զանոնք:

Տար

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՕԼՍԷՆ Եկած վերջին լուրերուն նայելով,
Սուլթանը Ֆրանսական դեսպան Պ. Գօնսթանի
միջամտութեան շնորհիւ արտաքսիլ տուած է
հայ օրագիր մը (journaliste) Պ. Պետրոս Ան-
մեղեան, որ նոր ատեններս բաւական խօսեցնել
տուաւ իւր վրայ ժէճ-թիւրքի կուսակցութեան
և Լահէի Սաղաղութեան վեհաժողովին Բ. Դը-
րան ներկայացուցիչներուն միջեւ յառաջ եկած
կռիւներուն մէջ:

Միեւնոյն տեղեկութեանց նայելով Պ. Գօնս-
թան հիմա Երևոյցի պալատին մէջ գերակշիռ
զիրք մը կրցած է ունենալ: Դեսպանը իւր ամ-
բողջ ազդեցութիւնը պիտի գործածէ Փոքր Ասիոյ
և Մակեդոնիոյ մէջ Ֆրանսական ընկերութեանց
մասին քանի մը զիջումներ (concessions) ստա-
նալու համար: Բնօրի
— ՓԱՐԻՉ հասած վերջին տեղեկութեանց
նայելով, Պարսից Եանը յանկարծ խելագարեք է.
Իւր ժամանակը կ'անցնէ եղեր պալատին ա-
մէն սենեակներուն մէջ հաստատել տուած հեռա-
ձայններու (téléphone) հետ գրօնելով:

Պուռս

— ԲՕԲԷՆԶԱԿԷՆ տարածուած լուրի մը հա-
մաձայն Չարի առողջական վիճակը շատ դէշ է.
և եթէ Չարը նպատակ ունի եղեր ժամանակ մը
հեռանալ իւր գահէն, խողով երկրին իշխանու-
թիւնը Միքայէլ Մեծ Դքսին:

Տեյլի Նիւզի Պէտլիի թղթակիցը կը կասկա-
ծի այս լուրին ստուգութեան վրայ, քանի որ
սա իւր ծագումն առած է Դանիոյ մայրաքաղա-
ղաքին մէջ:

— Տեյլի Նիւզի Ռիթէրի գործակալութեանէն
Բէքինէն կէս պաշտօնապէս կը ծանուցուի
թէ Չիտու եւ Չարոնի մէջ Նիդակցութեան մը
խնդիր չկայ: Չիտական ներկայ մասնաւոր
պատուիրակներու առաքումն ի Թօֆօ, պարզա-
պէս երկու պետութեանց մէջ բարեկամական յա-
րաբերութիւններն ամրապնդելու համար են:

— ԱՅՂԱՆԻ ԷՄԻՐԻՆ ԱՐԳՄԱՐՈՒԹԻՒՆԸ. —
Պէտլիէ Տեյլի Նիւզի թղթակիցը կը հեռագրէ թէ՛
Բեթերապուրէկ եկած հեռագրի մը համաձայն Աֆ-
ղանական ժէնէրալ Ապս-իւ-Շաֆիմ Խան, Բապուլի
չուկային մէջ տեղ է միջի հրամանով՝ հրացանի
բռնուած է իւր երեք բարձրաստիճան պաշտօնա-
կիցիներով, որոնք յանցաւոր գանուած են իրենց
զօրքերու ամառականները չի վճարելուն կամ կու-
ղոպտելուն համար:

Այս գործողութիւն Աֆղանիստանի մէջ մեծ
յուզում եւ սարսափ ազդած է:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ՌԻԹԹԷՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ,
ՓԱՐԻՉ, 6 Օգոստ.

Տրէյֆիւսի խնդրոյն վիճարանութիւնները պի-
տի սկսին երկուշաբթի Ռէնի հանրային վարժա-
րանին մեծ սրահին մէջ և 200 ֆրանսացի և օ-
տարական օրագիրներ ներկայ պիտի գտնուին:

Չարին հրաժարման առթիւ երէկուսն հրա-
տարակուած լուրը իրեւ կարելի կը նկատուի,
բայց քիչ նախանական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԴԵՐԸ

(ՀԱՅՐ ՇԱՐՄԹԱՆ)

ՊԱՇՏՈՆԱԳԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՎԻՐ ՄԷ.

Գլխավորն է կրօնքի պարտականութիւնն մը կատարելու համար երկու ամիս առաջ, Հայաստանի մէջ Միւսուլման միջնադարեան զոհերուն ի նպաստ կոչում մը ըրինք: Այսօր մարդասիրութեան և հայրենասիրութեան պարտականութիւնն մը կատարելու համար որոշեցինք հրատարակել պաշտօնական յիշատակագիր մը, որ հանրութեան պիտի ծանօթացնէ, անկարեկիր Եւրոպայի աչաց տակ մեր Հայաստանի եղբարց ահաբեկի կայութիւնը, ի մէջ բերելով Փռնական յանցարար դիրքը, որ այնքան ծանր պարագայներու տակ հրատարակու Արեւելքի Քրիստոնեաներուն դարաւոր և վեհ պաշտպանութեան գերէն:

Գրեթէ միակ կաթոլիկ թերթերը հաւանեցան մեր առաջին կոչումը արտատպել և յանձնարարել զոհեանքներուն ի նպաստ մեր բացած հանգանակութիւնը: Իսկ Փարիզեան մամուլը՝ մեծ մասամբ լռութիւն պահեց այս ջարդերուն վրայ, և նոյն իսկ եղան թերթեր, որք լռօրէն կը պատմէին թէ հայերն են որ կը ջարդեն թուրքերը:

Այսօր անպաշտօն թղթակցութիւնները չեն որ պիտի հրատարակենք. այլ բացարձակապէս վաւերական պաշտօնական յիշատակագիր մ'է, որ պիտի ծանուցնէ առանց չափազանցութեան, Հայաստանի ջարդերու ճշմարտութիւնը, մանաւանդ իւր սոսկալի մանրամասնութիւններովը և թուովը շատ աւելի պիտի գերազանցէ մեր առջի տեղեկութիւնները:

Նաեւ մտած ենք որ մամուլը այս յիշատակագրին տեղեկանալէ վերջ չը պիտի վարանի մեզի օգնել մեր ձեռնարկած մարդասիրական գործերու մէջ, ի նպաստ թըշուառ զոհերուն:

Արդէն երկու հարիւր հազար ֆրանքէն աւելի հաւաքուած ու զրկուած են, յետ այսու ալ մեր գովիթէն կարելի եղածին չափ շուտ պիտի հասնէ այս թըշուառ ժողովրդեան հետզհետէ գոյացած ամէն տեսակ նոյատմանը, ըլլայ դրամ, ըլլայ ըզգետ և այլն: Քանի մը շարժումն մէջ հաւաքուած 200,000 ֆրանքը կ'ապացուցանէ թէ՛ ի՞նչ վեհ հանձն թուելով Փռնական մասնակցած է հանգանակութեան, հակառակ մամուլին մեծ մասին դրական լռութեանը՝ որ մեր եղբարց արիւնով ազդուած սակեղ փոխարէն ծախած են:

Մեր ներկայացուցած պաշտօնական յիշատակագիրը պատրաստուած է Պուլոյ վեց գեապանատանց կողմանէ և հաղորդուած է իրենց յարգելի կառավարութեանց, ծանօթացնելու համար 1895ի երեք վերջին ամիսներուն մէջ Փոքր Ասիոյ տան և մէկ նահանգները արիւնտոզ եղելութիւնները:

Ձախձախիչ վկայութիւն մ'է Քրիստոնեայ պետութեանց համար, որք իրենց գեապաններուն միջոցաւ այս սոսկալի եղբարց գութեանց ամբողջ մանրամասնութիւնները ճանչնալէ յետոյ անկարեկիր գտնուեցան:

մինչդեռ կրնային այնքան դիւրութեամբ արգիլել այդպիսի ջարդերը:

Միայն Պապը իւր ձայնը բարձրացուց ի նպաստ զրկեալներուն, յուցնելու համար միջոց մը որ պիտի կրնար ապագայ խռովութեանց վերջ մը գնել:

Ջարդերու այս պաշտօնական յիշատակագիրը թէպէտեւ խիստ անկատար, սակայն ճշմարիտ մարտիրոսաբանութիւն (martyrologe) մ'է:

Վաւերական թուանշաններով, օրը օրին, և նահանգ առ նահանգ կը հաստատէ թէ՛ միայն գլխաւոր քաղաքներուն մէջ ջարդուած Քրիստոնեայներու թիւը երեսուն հազարի կը բարձրանայ, առանց հաշուելու, հիւպատոսներու աչքերէն հեռու խողխողուած Քրիստոնեայներուն թիւը, հազարաւոր Քրիստոնեայ գիւղերուն մէջ, որք այսօր կործանուած են:

Ինչո՞ւ համար ֆրանսական կառավարութիւնը կը յամառի գաղտնի պահել այս յիշատակագիրը: Ինչո՞ւ համար, նոյն իսկ կողմնակալ յայտարարութիւն մը չէ եղած մամուլին:

Արդեօք Հիւսիսի միապետութեան հաճելի ըլլալու համար է, որուն անձնատէր գլխաւորութիւնը, փոխանակ Միւսուլման մոլեռանդութեան կողմէ իւր սահմանազրկներուն դէմ ջարդուած Հայերը ազատելու, աւելի շահաւոր դատեց թուրքիան իւր պաշտպանութեան տակ առնուլ արգիլելով այսպէս Եւրոպայի միջամտութիւնը և ստիպելով Պրանսան՝ որ անկարեկիր աչօք նայի հայկական ջեղին բնաջնջմանը և եղբարց ժողովրդեան կործանմանը:

Նարուակիելի Թարգմ. ՃԱԼՄԱ

Թ Ո Ք Ա Ս

Գ.

Ա.հ.ՏԱՆԻՇԻՔ. — Առաջին ասիւն: Եստ մը դէպքերու մէջ մինչ արտօն իւր առաջին աստիճանին մէջ է, նշաններն են յաճախ դանդաղ և անստոյգ: Ենթակայ կրնայ անդիտակ մնալ ի մասին իւր վարակման և այս կարելի է տեսնել օրեր շարքիներ, ամիսներ և նոյն իսկ տարիներ: Ախտացեալն այս միջոցին կրնայ անփութաբար մաքառել արտին ազդեցութեան դէմ, և այսու յարգել հիւանդութեան ամուլն ու զարգացումն: Սակայն պիտի որ միանգամ իւր բոյնը դրած է թոքերուն վերին կամ վարին ներքին ծայրերուն մէջ՝ անց կը մնայ դարանակալ սպասելով պատեհ առթիւ մ'ի գործ դնել իւր աւերիչ ազդեցութիւնը: Ի սկզբան թեթեւ, չոր և յամր կամ կորստեալ հալ մ'է, որով կ'սկսի հիւանդութիւնը, և այս կը պատահի արտակապէս առաւօտեան ժամերուն, որ փոքր ինչ ժամանակէն նոյնը տեղի կ'ունենայ նաեւ օրուան ընթացքին մէջ՝ որոյ կը հետեւի մերթ կամ յաճախ արհնաթրութիւնը:

Ժամանակ մը վերջ հաղը կը շտնայ. մասնաւորապէս գիշերները և առաւօտները: Այս անգամ քանակութեամբ սննդան, բայց փոքրալից խոտի մ'է՛ զոր կորստաբուր թոքերէն: Թոքերու այն մասը՝ ուր հաստատուած է արտը, կը կորստնցնէ իւր նախկին զօրութիւնը թիրեւս անբզգալապէս. և մերթ տեղի կ'ունենայ այդ մասին վրայ թեթեւ տաքութիւն մը, կամ յամր և կամ սուր ցաւ մը: Վարակեալն այս վիճակին մէջ կ'ըսկարի սակաւ ինչ գունատիլ, շնչառութիւնը սովորականէն կարճ իսկ բազկերակն առաւել արագ կը զարնէ ընդհանրէն. և այս կը պատահի մասնաւորապէս կերակուրէն վերջը և երեկոյան միջոցներուն, որ ատեն հիւանդը կ'զգայ թեթեւ մը՝ որուն կը հետեւի մարմնի ծանրութիւն մը և ոտից կը հետեւանք կ'ըսկարի թուլութիւն և սկարութեան վիճակ մը:

Երկրորդ ասիւն: Այս վիճակին մէջ հիւանդութիւնը կ'սկսի տակաւ վար առնուլ իւր դիմակն և մասնակ ինքզինք հետեւեալ նշաններով: Ենթառութիւնն՝ որ յառաջագոյն չէր պատճառէր ո և է նեղութիւն մը՝ այժմ կ'սկսի տկարանալ՝ ձայնը կը կորսնցնէ իւր նախկին զօրութիւնն և տեղի կուտայ կեկերումի, այսպէս կ'ստանան մերթ գունատ և մերթ շիկալոյն կերպարան մը. քիթը կ'սկսի բարակնալ և աչիւրը թէեւ փայլուն սակայն կ'ստանան խոռոչացեալ վիճակ մը. և զունքները թեքացեալ, երեսները փոստացեալ, ուսի և այտի ոսկորները դուրս ցցուած. լեզուն է մուրթ և կարմրալոյն իսկ կողորդը ծածկուած ճերմակ փոքր կեղերով:

Այս աստիճանին մէջ վարակեալը կորսնցնելով իւր նախկին ոյժը, կ'սկսի որ ըստ օրէ տկարանալ և մազերը թափել, հազն աւելի յաճախ կը պատահի և խուլն, որ կ'արտաքսուի թոքերէն, չէ փոքրալից—խժային, ինչպէս էր առաջին աստիճանին մէջ, և ոչ ալ քանակութեամբ աննշան, այլ առատ և սակաւ ինչ մթին ու թանձր, մերթ դեղնագոյն, մերթ կանաչալոյն ու յաճախ արիւնախառն. երբ հազն լինի աւելի սաստիկ, այն ատեն կը պատահի ործոյս թիւն (փսխում): Այս վիճակին մէջ կը պատահի մերթ ընդմիջեալ ծերկան տեղ մը որն երկու անգամ, մին առաւօտեան և մյուս երեկոյան, առաւօտեան ջերմի ժամանակն և սաստիկ թիւնն է անկանոն, իսկ երեկոյանն աւելի սաստիկ և կ'անոնաւոր. զոքը կ'սկսի սարսուռով մը, որուն կը յաջորդէ տաքութեան վիճակ մը և յաճախ կը տեսնուին մինչև առաւօտեան մօտերը, այն ատեն ջերմը կ'անհետի տեղի տալով առատ քրտինքի մը՝ այնքան առատ՝ որ յաճախ կը թրջեն անլիզնոյ սաւաններն: Երրորդ ասիւն: Այս աստիճանին մէջ ներկայ են երկրորդ աստիճանի գրեթէ բոլոր ախտանշանք իրենց սաստիկութեամբ. հաղը կ'ստանայ աւելի նեղիչ և յարատեւ կերպարան մը՝ խուլը զոր կ'արտաքսուի թոքերէն աւելի առատ, աւելի թանձր և շատաւելի է և յաճախ գորշահոտ: Մերթ ընդ մերթ կը պատահի սրտի բարախումներ և աւելի յաճախ փորձարութիւն սկարացուցիչ կերպով՝ ոտքերն և յարշապարներն յաճախ կուռնին և հիւանդն այլ ևս կը կորսնցնէ իւր բոլոր ոյժն և կ'սկսի հալիլ ու մաշիլ և դատաւ կ'ախիւր մը:

Ա.հ.ՏԱՆԻՇԻՔ. 1. Հարիւրայն բոխալս: — Թոքախտի հիւանդութեանց այս սեռակն յաճախ դժուար է զանազանել թիւլեմիւլային թոքախտի հետ: Եստ մը կէտերու մէջ հարբխային թոքախտը սերտ նմանութիւն մ'ունի հարբխային ցնցղապատալի (պոստիլ) հետ. սակայն այս երկուքը իրարմէ զանազանել այնքան դժուար է, քանի որ հարբխային թոքախտի մէջ տաքութեան աստիճանն աւելի բարձր է, և հիւանդը կ'սկսի օր ըստ օրէ տկարանալ և հիւսնել:

2. Թիւլեմիւլային բոխալս կամ բոխային գնխալս. — Հիւանդութեան այս սեռակն իւր առաջին աստիճանին մէջ շատ անգամ կը չփոթի մանրատոզութեան, անարիւնութեան, մալարիալ (malarial) կոչուած տեղի և սրտի հիւանդութեանց հետ:

3. Նեարդային բոխալս. — Ասիկայ կ'սկսի իբրև ցնցղային հարբխալ և կը յառաջանայ տակաւ առ տակաւ՝ ամատուան ամիսներուն մէջ շնորհիւ օդի չորութեան և տաքութեան յաճախ կ'ընդմիջի հիւանդութիւնն և կը վերսկսի շարունակել իւր ընթացքը ձմրան ամիսներուն մէջ՝ որ ատեն հիւանդութիւնն զգալի յառաջալիսութիւններ ընելով՝ թոքերուն մէջ կը բնայ խոռոչներ:

Արագանիւծ կամ սուրու բոխալս. — Այս հիւանդութեան ախտանշանք այնքան նման են թոքոի հիւանդութեան ախտանշանն որ յաճախ նոյն իսկ հետու բոխայինը դժուարաւ կրնան գտնազանել այս երկուքն իրարմէ:

ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈԲՅԱՆ

ԾԻՏԱՂՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱՇՈՅ

Երկարեւորէն մէջ Ար ԵՍ կին իննց մեղալուսնի ցամբորդութեան վրայ կը խօսակցեն:

Ար ԵՍ, հինգ քարեկան, ընդմիջելով յանկարծ հարցոց.

— Հայրիկ, այդ ժամանակ ես ո՞ւր էի:

— Հայր վարկեան մը մտասանցութեան վերջ պատահականեց.

— Տղա՛ս, երբալու տեսն ինձ հետ. Ա՛յ ե՛ր դառնալի՛ տեսն մարիկիդ հետ էիր . . . :

— Ինձ վա, ուր ես կը պարծենար ի՞նչ փափկաւորութեան վրայ, որ չէր ինձ մատակարար խանութը գտնուելով վախ կը գարեհր անուր բնօրո՞ւմ արհեստը:

— Անոր Բ. Բ. ինչպէս ձեռք առաւ կ'եքոյ, կ'ըսէր. այժմ խեղճ ոչխարներ մորթելու:

— Մտալուսնուր գարմանալով պատասխանեց,

— Տիկին, որդ որդ ուտելն ես կ'ախտեմ իմ ուրեմն . . . :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԳԱՀԻՐԷ, Յ. Գ.— Ստացականը վաղը կ'ընանք զրուհի:

Ս. Գ.— Ծնորհակալ ենք. Ստացանք:

Կ.— Գոնէ ձեզի համար այնպէս չէր: Չեր չնորհաւորութիւնը, որոյ մասին յանձնա չնորհակալ եմ, բամբակի մէջ ծրարուած քար մը կը պարունակէր . . . :

Ս.— Եթէ բանաստեղծի հովերը իւրացնելու ձեր փափաքը անձանիս լինէր մեզ, թերեւս մեղադրէի ձեզ: Ես առ յիտակ մտածելը, գրելու ամենէն ուղիղ ճամբան է:

Ս.— Զեր հասցէները մենք խիստ լայն կը ճանչնանք:

ՃԻՊՈՒԹԻ, Յ.— Շուտով ձեր նամակին կ'ուղարկենք:

ԱՂԵՔՄԱՆԴԻՐՈՒ, ԾՆԱԳ.— Վրիպում մը եղած լինելու է: Ձեր երկտողին մէջ զգացմանց ամենէն ազնիւր գտալ: Բնորոշ կը հասնի:

Յ. Գ.— Մեզի անձանիս է. չենք կըրնար հրատարակել: Ուրբա՞յ որ ժամը 4 1) Ձին «Ճգնաւորը» պիտի տեսնէք (Café Pyramide) ծովափը. նա թող յանձնարարէ:

Վ. Վ. Ա.— Ժողովրդական առածը քի մամ էլիսեմն առ, քոր կեօզեմն ես: Ժողովրդի քրտանց արդիւնքով կ'տնորհեմ ուտեցնելու ջանացէ՛ք . . . :

ՀԱԻԱՔԱՇԻԹԷ, Ա. Օ.— Նոյնութեամբ կը կատարուի ձեր փափաքը: Միւսներու՞մ համար կը տեսնուինք յետոյ:

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Ա. Թ. ՍԵՏԵՔՉԵԱՆ

Իւր լուսանկարչատունը Կ, Պօլէն փողատարելով ի Գահիրէ, ԲԱՄԲԱՎ վաճառատան փողոցը, Գօրտօնըրի Բարիկէնի քով, Օթէլ Մահրուսայի մէջ հաստատած է:

Ամենամեծ խնամք կը պատրաստէ ամեն մեծութեամբ լուսանկարներ, խիստ զիջարմատելի գներով:

Իրեն գիմող յաճախորդները շատ գոհ պիտի մնան, թէ՛ լուսանկարներու մաքրութեան և թէ՛ գոյներու մնայունութեան կրկին տեսակէտներով:

ԼԵՌՆ ԿԻՄԻՏԻՃԵԱՆ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԳՈՇԱՐԵՂԻՆԱՅ

ԳԱՀԻՐԷ, — Մուսի փողոց, — ԳԱՀԻՐԷ, Ա. Ե. Ս. Սեմուվիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ իմ գոնուի նաեւ պատի եւ քոնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ միջեր:

Գիմեցէ՛ք հոն եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ նիւթի, ֆրանսական եւ ամերիկեան փայլանաց ամենաընտիր տեսակներէն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն օժանոթ ժամադրոթի միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԶԱՓԱԻՈՐ

ՏՕՐՓՈՐ ԺՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍԱՄԵԱՐՈՅԺ Ապրիլ, Շարէ Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաններ:

Կը դադարեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովս:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն ստիւնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Ա Ձ Դ

Տիկին Սօֆիկ՝ Ազգաբնակչան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գահիրէ հաստատած ըլլալով, պատիւունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատրաստ է իւր խնամքները տալ իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խզարիտ աշխատութիւնը զինքը քաղաքիս առաջնակարգ մանկաբարձներու կարգը կ'անցընեն:

Դիմել Պէն-էլ-Սուրէն, Ղուրուֆիլի փողոց թիւ 53:

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՍՕՉԱՄԵՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Ֆուկեր, Գիրտեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտութեան և գներու չափաւորութեան մէջ:

Երկրպետի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant, Dr A. S. HAGOPIAN

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաւարդ) սեւ, շագ անակազոյն և ոսկեգոյն: Սէք ներկ շիշով վաճարեանապէս կ'ուտեսնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զրշող (2 ֆրանք):

Իւրտրա՝ սքանչելի տեսակէն, որը միանգամայն մարմինը քրտինքիսպաշէ զերծ կը պահէ:

Ճերմկեցող ջուր շիշով, որը մարմնին բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Երկրպետի մէջ միակը:

Լողանքի ջուր, մարմնոյթէ՛ր փափկութիւն և թէ՛ անուշահոտութիւն կուտայ:

Ակուայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Օտար երկիրներէ և գաւառներէ կանխիկ գրամով եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Սոյն ջրերէն կարելի է գտնել նաեւ Ապտին, Տայրէի Սանիէի դիմաց Պազար Թիւրփ վաճառատունը:

Կը գտնէք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները: